ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/21/7469-2022

08 09
«.....».....2022 թ.

«ՊՐՈՄԱՔ» ՍՊԸ-Ի

ՏՆՕՐԵՆ Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՊրոՄաք» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի դեկտեմբերի 07-ին կնքված թիվ «ՄԱԱՇՁԲ-13-25» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել «**Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական»** աշխատանքներ՝ (այսուհետ՝ Աշխատանք) համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 Հավելվածով ներկայացված գնման ժամանակացույցի և N 2 Հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրի:

Նշված Պայմանագիրը՝ 20.12.2019թ. կնքված եռակողմ համաձայնագրով ՀՀ պաշտպանության նախարարության փոխարեն, որպես պատվիրատու է ճանաչվել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը:

Համաձայն Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի՝ (Համաձայնագիր թիվ 1՝ առ 30.08.2019թ.) պետք է մինչև 15.11.2019 թվականը Կատարողի կողմից հանձնվեր երկրորդ փուլի, իսկ մինչև 20.12.2019 թվականը՝ երրորդ փուլի արդյունքները:

Համաձայն Պայմանագրի 6.2 կետի՝ Կողմերից որևէ մեկի միակողմանի հրաժարման դեպքում մեղավոր կողմը փոխհատուցում է մյուս կողմի բոլոր վնասները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նույն Պայմանագրի 6.5 կետի համաձայն՝ կատարողը պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում փորձակոնստրուկտորական աշխատանքների

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ. (37410) 590009, էլ. հասցե՝ narek.melkumyan@hti.am

կատարման պայմանագրի խախտման համար, եթե չի ապացուցում, որ նման խախտումն առաջացել է իր մեղքից անկախ հանգամանքների հետևանքով, և սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը չկատարելու դեպքում վերադարձնում է պատվիրատուի կողմից տրված կանխավճարը և առանձին փուլերով կատարված աշխատանքների դիմաց վճարված գումարը, ինչպես նաև վճարում է տուգանք պայմանագրի գնի 0,5 %-ի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2018 թվականի դեկտեմբերի 07-ին կնքված թիվ «ՄԱԱՇՁԲ-13-25» գնման պայմանագրի 2.1.5 կետը, 2022 թվականի սեպտեմբերի 08-ին մասնակի միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ «ՊրոՄաք» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900011027837» հաշվեհամարին վերադարձնել (վճարել) տրամադրված կանխավճարը՝ 20,000,000 (քսան միլիոն) ՀՀ դրամ գումարը, իսկ տուգանքը՝ պայմանագրի գնի 0,5 %-ի չափով՝ 555,000 (հինգ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարը, նույն ժամկետում վճարել գանձապետական «900005028106» հաշվեհամարին:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

9/8/2022

X

ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: MELKUMYAN NAREK 3114850200 **ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**

ԳՈՐԾԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Գնումների բաժնի պետ՝
Ա. Բաղդասարյան 010 59 00 47

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ. (37410) 590009, էլ. հասցե՝ narek.melkumyan@hti.am